ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 43

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 11 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի հինգերրորդ մասով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 11 արտահերթ նիստի օրակարգը համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ
4. ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
N 43 ՈՐՈՇՄԱՆ

ՕՐԱԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի N 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

3. ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

6. ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/ԶԵԿՈՒՅՈՂ՝ Հ. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ/

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 44

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ,ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասին 26-րդ կետով և <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ կետով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի համայնքապետարանի աշխատակազմի և <<Մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն թիվ 1 և թիվ 2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ
4. ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
N 44-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ << ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 14
2.Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	Հաստիքի անվանումը	Հասըիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
1	Մանկապարտեզի վարիչ	1	100000
2	հաշվապահ	0.5	85000
3	Դաստիարակ	2	97600
4	օտար լեզվի դաստիարակ	0.5	97600
5	Դաստիարակի օգնական	2	71000
6	Դաշնակահար	0.5	97600
7	հաշվետար-գանձապահ	0.5	66140
8	Խոհարար	1	71000
9	պահակ	2	78200
10	Բուժքույր	0,5	78000
11	Հավաքարար	1	78000
	Ընդամենը	10	

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
N 44-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 12
2. Աշխատակազմի հասիքացուցակը և պաշտոնային դրույքաչափը՝

h/h	Հաստիքի անվանումը	Հասըիքային միավորը	Պաշտոնի դրույքաչափը
1	Համայնքի ղեկավար	1	220000
2	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	173000
	ԱՇԽԱՏԱԿԱԶՄ		
1	Աշխատակազմի քարտուղար	1	153000
2	Առաջատար մասնագետ	2	150000
3	1-ին կարգի մասնագետ	1	127000
4	2-րդ կարգի մասնագետ	1	121000
1	Գրադարանի վարիչ	1	95000
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ	ՍՊԱՍԱՐԿՄԱՆ	ԱՆՁՆԱԿԱԶՄ
1	Հուշարձանի խնամող և պահպանող	1	82000
2	Վարորդ	1	127000
3	Հավաքարար	1	82000
4	Օժանդակ բանվոր	1	127000
	ԸՆԴԱՄԵՆԸ	12	

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 45Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 19-րդ կետով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի երկրորդ մասով.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի կողմից 2017 թվականի ընթացքում մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ
4. ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Արտիմետ
համայնքի ավագանու
2016թվականի նոյեմբերի 30-ի
N 11 նիստի N 45 Ն որոշման

ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՄԱՑ ԳԱՆՁՎՈՂ ՎՃԱՐՆԵՐԻ

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետի գյուղական համայնքի իրավասության շրջանակներում քաղաքացուն տրվող, ինչպես նաև հաստատվող փաստաթղթերի համար համայնքի կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարը սահմանվում է՝

   1) համայնքի բնակիչ համարվող անձանց կտակը վավերացնելու համար՝ հինգ հազար դրամ.

   2) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունք ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.

   3) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ աշխատավարձի և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարներ ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.

   4) համայնքի բնակիչ համարվող անձանց՝ նպաստներ և կրթաթոշակներ, քաղաքացիների՝ բանկային ավանդներ և փոստային առաքումներ / այդ թվում՝ դրամական և ծանրոցային / ստանալու լիազորագիր հաստատելու համար՝ մեկ հազար դրամ.

   5) համայնքի բնակիչ համարվող անձանց բնութագիր և երաշխավորագիր տալու համար՝ մեկ հազար դրամ:

2. Համայնքային ենթակայության մանկապարտեզում երեխաների պահպանման համար ծնողական վճար սահմանել հինգ հազար դրամ.

   1) բնակչության առանձին խմբերի համար վճարների արտոնություններ սահմանել հետևյալ չափերով

      ա. միակողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 0.50 տոկոսի չափով՝ երկու հազար հինգ հարյուր դրամ.
      բ. երկկողմանի ծնողազուրկ երեխաների համար՝ 100 տոկոսի չափով.
      գ. զոհված և հաշմանդամ դարձած ազատամարտիկների, ինչպես նաև առաջին կարգի հաշմանդամների երեխաների համար՝ 100 տոկոսի չափով:

Աշխատակազմի քարտուղար՝ Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 46Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 18-րդ կետի պահանջներով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի և վճարների 2017 թվականի դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ
4. ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2016ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի
ԹԻՎ 46 -Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագիծ համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության / տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ հիմնական օբյեկտների համար՝
   1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 5000 դրամ /հինգ հազար/:
   2) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
      ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000 դրամ /տասնհինգ հազար/.
      բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25 000 դրամ /քսանհինգ հազար/.
      գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երեսուն հազար դրամ.
   3) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500 դրամ /հազար հինգ հարյուր/.
   4) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 դրամ / երկու հազար հինգ հարյուր/.
2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլատրություն չպահանջվող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 1000 դրամ / մեկ հազար/.

2) բացի օբյեկտի վերակառուցման , ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքի գործառնական նշանակության փոփոխություն, ապա բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքի գործառնական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների / այդ թվում ստորգետնյա / շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման հավելված 1-ին կետով սահմանված նորմերը.

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2000 դրամ/ երկու հազար /:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝

1) ոգելից խմիչքների վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ /չորս հազար/.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 4000 դրամ / չորս հազար/.

5. Համայնքի տարածքում՝

1) բացոթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ / երեք հարյուր հիսուն/.

2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների , հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 դրամ / մեկ հարյուր հիսուն հազար /.

6. Հանայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50 000 դրամ /հիսուն հազար/.

7. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները , բաղնիքները /սաունաները/ խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

1) առևտրի օբյեկտների համար 25 000 դրամ /քսանհինգ հազար/.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 դրամ /հիսուն հազար /.

3) բաղնիքների /սաունաների/ համար 200 000 դրամ /երկու հարյուր հազար/.

4) խաղատների կազմակերպման համար 500 000 դրամ /հինգ հարյուր հազար/.

5) շահումով խաղերի կազմակերպման համար 250 000 դրամ /երկու հարյուր հիսուն հազար/.

6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 դրամ /մեկ հարյուր հազար/.

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ / մեկ հազար /.

2) թունդ ալկոհոլային / սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500 դրամ / երկու հազար հինգ հարյուր/.

3) այլ արտաքին գովազդի համար 5000 դրամ /հին գ հազար / .

4) դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ /յոթ հարյուր/.

9. Համայնքի արխիվից փաստաթղերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը տնթացիկ տարվա համար սահմանել 1000 դրամ / մեկ հազար /:
10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու / բացառությամբ երթուղային տաքսիների / ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ / հինգ հազար /:
11. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցված ծառայությունների համար սահմանել փոխհատուցման վճար 5000 դրամ /հինգ հազար/:
12. Գյուղապետարանի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու , հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների համար սահմանել փոխհատուցման վճար 1000 դրամ /մեկ հազար /:
13. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 5000 դրամ /հինգ հազար/:

Աշխատակազմի քարտուղար Գ. Մովսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 47Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետով, 54-րդ հոդվածով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվ ածի երկրորդ մասով և <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ և 33-րդ հոդվածներով.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի 2017 թվականի բյուջեն՝ եկամուտների գծով՝ 45481.0 հազար դրամ, ծախսերի գծով՝ 45481.0 հազար դրամ, դիֆիցիտը /պակասորդ/ 0.0 հազար դրամ՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել համայնքի բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների՝ համաձայն հատված 1-ի:

3. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական դասակարգման՝ համաձայն հատված 2-ի:

4. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 3-ի:

5. Հաստատել համայնքի բյուջեի միջոցների տարեվերջի հավելուրդը կամ դեֆիցիտը /պակասորդ/՝ համաձայն հատված 4-ի:

6. Հաստատել համայնքի բյուջեի դեֆիցիտի /պակասորդի/ ֆինանսավորման աղբյուրները կամ հավելուրդի օգտագործման ուղղությունները՝ համաձայն հատված 5-ի:

7. Հաստատել համայնքի բյուջեի ծախսերը ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման՝ համաձայն հատված 6-ի:

8. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև:

9. Սահմանել, որ փոփոխությունների հանրագումարը բյուջետային տարվա ընթացքում չի կարող գերազանցել չափաքանակների 50 տոկոսը:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ
4. ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՏԻՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Արտիմետ, (093) 459547, (093) 186297, artimet.armavir@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2016թվականի N 48

ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի հինգերորդ մասով.

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արտիմետ համայնքի երեխաներին ամանորյա նվերներ պատրաստելու համար տրամադրել 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

2. Արտիմետ համայնքի կենտրոնական փողոցը ամանորյա տոների կապակցությամբ տոնական լույսերով զարդարելու համար տրամադրել 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ գումար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐԹՈՒՐ
2. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԿՐՏԻՉ
3. ԴԱՆԻԵԼՅԱՆ ԼԻԼԻԿ
4. ԹԱՌՈՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ
5. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ
6. ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ ՎԱՀՐԱՄ
7. ՏԵՐՏԵՐՅԱՆ ԿԱՐԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ